ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2022, հ. 75, N 3, 57-59
Известия НАН РА, Науки о Земле, 2022, т. 75, N 3, 57-59
Proceedings NAS RA, Earth Sciences, 2022, v. 75, N 3, 57-59

ԳԻՏԱԿԱՆ ԽՐՈՆԻԿԱ

ՀՀ ԳԱԱ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՍԵՄԻՆԱՐՆԵՐԸ

Հուլիսի 15-ին, “Սեյսմատեկտոնական ազդեցությունը Սևանա լճի ավազանի հյուսիսարևելյան հատվածի լանջային գործընթացների վրա”, զեկուցող՝ Գեոդինամիկայի և երկրաբանական վտանգների լաբորատորիայի կրտսեր գիտաշխատող Սեդա Ավագյան

Սեպտեմբերի 7-ին, “ՀՀ ԳԱԱ ԵԳԻ և ՌԴ Սանկտ-Պետերբուրգի համալսարանի Երկրի մասին գիտությունների ինստուտի միջև համագործակցության հեռանկարները”, զեկուցող՝ ՌԴ Սանկտ Պետերբուրգի համալսարանի, Երկրի մասին գիտությունների ինստիտուտի Երկրաքիմիայի ամբիոնի պրոֆեսոր, դոկտոր Ելենա Գենադիի Պանովա

Հոկտեմբերի 10-ին "Ալթայ-Սայան ծալքավոր շրջանի պղինձ պորֆիրային հանքայնացման կանխատեսումա-հետախուզական աշխատանքների իրականացման փորձը", զեկուցող՝ Սիբիրի Դաշնային համալսարանի Հանքավայրերի երկրաբանության և հետախուզման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ե.-հ.գ.դ., պրոֆեսոր Մակարով Վլադիմիր Ալեքսանդրի

Նոյեմբերի 3-ին, "Կիրառական սեյսմալոգիայի մի քանի նոր խնդիրներ", զեկուցող՝ ԵԳԻ Գեոդինամիկայի և երկրաբանական վտանգների լաբորատորիայի գլխավոր գիտաշխատող, ակադեմիկոս Էդուարդ Խաչիյան

ԾՐԱԳՐԵՐ

ՀՀ Գիտական համայնքների արտերկրի գիտնականների ինտեգրման աջակցության ծրագիր

Թեմա. «Հայաստանի կարևոր (ռազմավարական) միներալների ներուժի գնահատումը՝ բարձր տեխնոլոգիական արադյունաբերության համար էկոլոգիապես կայուն արտադրության նպատակով»
22IRF-08, ղեկավար - Հովակիմյան Սամվել

Ասպիրանտների եվ երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր

Թեմա. «Իզոտոպային մեթոդների կիրառումը Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրերի ծագումնաբանության և վերականգնման ռեժիմի ուսումնասիրություններում»

22AA-1E012, ասպիրանտ- Ներսիսյան Արաքսյա, գիտ. ղեկավար Առաքելյան Ալեքսանդր

Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր

Թեմա. «Հայաստանի պալեոզոյան լեռներում շրջակա միջավայրի փոփոխությունների համաշխարհային ռեկորդի վերծանումն ընդդեմ տարածաշրջանայինի»

22rl-016, ղեկավար - Դանելիան Տանիել, համաղեկավար – Սերոբյան Վահրամ

Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի շրջանակներում իրականացվող «Գիտական հոդվածների տպագրության համար երիտասարդ գիտնականներին խրախուսման մրցույթ» 22YSSPI-013, Սերոբյան Վահրամ

Գործուղումներ

ՀՀ ԳԱԱ ԵԳԻ տնօրենի խորհրդական, ակադեմիկոս Ռուբեն Զրբաշյանը հունիսի 28-ից հուլիսի 3-ը գործուղվել է Վրաստան, ք. Թբիլիսիի համալսարան, համատեղ աշխատանքների քննարկման համար:

Գեոարխեոլոգիայի և գեոմոնիթորինգի լաբորատորիայի գիտաշխատողներ Հեկտոր Բաբայանը և Միքայել Գևորգյանը օգոստոսի 18-24-ը գործուղվել են Վրաստան, ք. Թբիլիսիի Իլիա համալսարան, ՄԳՏԿ-ի Ա-2334 ծրագրի շրջանակներում համատեղ աշխատանքների քննարկման նպատակով:

Հրաբխագիտության լաբորատորիայի կրտսեր գիտաշխատող Լիլիթ Գևորգյանը սեպտեմբերի 9-16-ը գործուղվել է Լեհաստան, համաշխարհային կազմակերպության կողմից կազմակերպված «Արտակարգ իրավիճակներում բժշկական խմբերի և տեղեկատվության կազմակերպում» թեմայով վերապատրաստման:

Երկրատեղեկատվության լաբորատորիայի կրտսեր գիտաշխատողներ Արաքսյա Ներսիսյանը և Լիլիթ Սարգսյանը նոյեմբերի 2-5-ը գործուղվել են Վրաստանի հանրապետություն, ք. Թբիլիսի, «GIS based

solutions for ENP in the Southern Caucasus» ծրագրի շրջանակներում վերապատրաստման:

Գեոդինամիկայի և երկրաբանական վտանգների լաբորատորիայի վարիչ Արա Ավագյանը նոյեմբերի 8-ից 27-ը գործուղվել է Եգիպտոս, արխեոսեյսմաբանական և պալեոսեյսմաբանական հետազոտություններ իրականացնելու նպատակով:

Լիթոլոգիայի և ռեգիոնալ երկրաբանության լաբորատորիայի վարիչ Լիլիթ Սահակյանը նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 7-ը գործուղվել է Գերմանիայի դաշնություն, Գրեյսֆալդի համալսարան, գիտական համատեղ աշխատանքներ իրականացնելու նպատակով:

ԵԳԻ տնօրենի տեղակալ, ե.գ.թ. Լիլիթ Սահակյան

Գիտական խրոնիկա
Научная хроника
Scientific Chronology